ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ապրիլի 2014թ. N------Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՋՈՐՋ ԲԱՅՐՈՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2- րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն 19-րդ դարի անգլիացի բանաստեղծ, Եվրոպայի մեծագույն գրող Ջորջ Բայրոնի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Բայրոնի 1 հասցեում գտնվող «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկի» կենտրոնական գրասենյակի շենքի ճակատային մասում փակցնելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ - ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՋՈՐՋ ԲԱՅՐՈՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Որոշման ընդունման համար հիմք է հանդիսանում Երևանի *քաղաքապետարան հասցեագրված՝* քանդակագործ Հայկ Թոքմաջյանի դիմումը, որում նա իր իսկ նախաձեռնությամբ առաջարկել է Ջորջ Բայրոնի 225–ամյակի կապակցությամբ՝ իր հեղինակած հուշատախտակը տեղադրել Երևանում, բանաստեղծի անունը կրող փողոցում և հավաստիավրել է, որ ֆինանսավորումը իրականացնելու է «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկը»:

Նշված հուշատախտակի էսքիզներն ու մանրակերտը քննարկվել է Երևանի քաղաքապետին կից քաղաքաշինական խորհրդի գեղարվեստի հանձնաժողովում, որը *ս.թ. մարտի 17–ին կայացած նիստի ժամանակ* միաձայն հավանության է արժանացրել *պատշաճ* մասնագիտական *մակարդակով* արված գործը:

Որոշման ընդունման համար նաև հիմք է հանդիսանում հայ ժողովրդի սերն ու ակնածանքը բանաստեղծի հանդեպ, քանի որ Բայրոնը, հանդիսանալով Եվրոպայի մեծագույն գրողներից մեկը, նաև առաջին հայագետներից էր: Վենետիկի Սուրբ Ղազար կղզում Բայրոնը ծանոթացել է հայկական մշակույթին, սովորել է հայերեն: Նրա օգնությամբ մի շարք կրոնական և աշխարհիկ ձեռագրեր են թարգմանվել անգլերենից հայերեն և հայերենից անգլերեն և ստեղծվել է անգլերեն-հայերեն բառարան:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ ըստ որի հուշարձանի իրականացման վերաբերյալ առաջարկությունը նախապես համաձայնեցվում է համապատասխան համայնքի ավագանու հետ, ուստի Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՋՈՐՋ ԲԱՅՐՈՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ջորջ Բայրոնի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՋՈՐՋ ԲԱՅՐՈՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ջորջ Բայրոնի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ